«Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Մ Ե Մ»

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ,

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ

ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ»

ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ՝ Կ. Ռ. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

Կ Ա Ր Ծ Ի Ք

Նարինե Ալբերտի Շամամյանի «Պարը հայկական հարսանեկան արարողություններում»(20-րդ դար-21-րդ դարասկիզբ) խորագրով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ

Թանգարանի ազգագրության երկու գիտական բաժինների գիտաշխատողները (Ս. Պողոսյան, Մ. Ավետիսյան, Հ. Մելքոնյան, Շ. Հովհաննիսյան, Կ. Երիցյան, Ս. Ասլանյան, ելույթներ՝ Ս. Պողոսյան, Մ. Ավետիսյան) 2021թ. սեպտեմբերի 25-ին կայացած նիստին, քննարկելով Նարինե Ալբերտի Շամամյանի ատենախոսությունը, հավաստում են, որ այն նվիրված է հայ ժողովրդական հարսանեկան պարերի ուսումնասիրությանը՝ ավանդական և ժամանակակից դրսևորումներով: Ատենախոսության մեջ ներկայացված են դիտարկվող հիմնական հասկացության սահմանումները, թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը, մեթոդաբանությունը, գիտական նորույթը և աշխատանքի գործնական նշանակությունը: Կարևորված է պարերի ըստ հարսանեկան համալիրի ծեսերի հերթականության կատարման խնդիրը:

Ատենախոսության նպատակն է ներկայացնել հայկական հարսանիքում կատարվող պարերի համապատկերը և դրանց դասակարգումը՝ ըստ համապատասխան ծեսերի: Աշխատանքն ունի անհրաժեշտ ձևաչափ: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (համապատասխան ենթագլուխներով), վերջաբանից, գրականության ցանկից, բանահյուսական նյութերի և լուսանկարների հարուստ հավելվածից: Ատենախոսության համար հիմնական նյութ են ծառայել 2009-2017 թվականներին իրականացված դաշտային ազգագրական հետազոտությունները, արխիվային նյութերը, գեղարվեստական գրականության տվյալները, գեղարվեստական և փաստավավերագրական կինոնկարների դրվագները:

Առաջաբանում ներկայացված են դիտարկվող առարկայի էությունը, աշխատանքի նպատակն ու խնդիրները, հետազոտության տեսական հիմքը, օգտագործված գրականությունը, թեմայի նորույթն ու արդիականությունը: Ատենախոսության առաջին գլխում ներկայացված են հայկական հարսանեկան արարողություններում կատարվող պարերի առանձնահատկությունները: Դիտարկված են պարերի անվանման հետ կապված ժողովրդական բնորոշումները և գիտական մեկնաբանությունները:

Աշխատանքի երկրորդ՝ «Պարերն ու պարերգերը հայոց ավանդական հարսանեկան ծիսաշարում» գլխում բնութագրված են մինչհարսանեկան, բուն հարսանեկան և հետհարսանեկան արարողություններում կատարվող պարերը՝ ըստ ծեսերի հերթականության: Հայոց ավանդական հարսանեկան ծիսահամալիրի գրեթե բոլոր արարողություններն ուղեկցվել են յոթ կամ երեք շրջան պարերով, իսկ երկու քայլ աջ, մեկ քայլ ձախ պարային բանաձևը համընդհանուր է հայոց պարային մշակույթում և դա կատարվել է ցանկացած երգի, պարեղանակի ուղեկցությամբ:

Երրորդ՝ «Պարն արդի հարսանեկան արարողություններում» (20-րդ դ. վերջ-21-րդ. դ. սկիզբ) խորագրով գլխում քննության են առնվել հարսանեկան արարողություններում առաջացած նոր պարառճերը, այլազգի պարերը, ավանդական պարերի ձևափոխումները և փորձ է արված գտնել դրանց պատճառները:

Ամփոփելով աշխատանքը հեղինակը հանգել է մի շարք ուշագրավ եզրակացությունների: Ավանդական հարսանեկան ծիսահամակարգում պարերն ունեցել են հստակ գործառույթներ և ուղեկցել ծիսակարգի հիմնական փուլերը: Հարսանիքում պարերը ծիսական իմաստավորում են ստացել տեղի, ժամանակի, կիրառվող առարկաների, մասնակիցների հատուկ կազմի, բնութագրական կերակրի պատրաստման և մատուցման շնորհիվ: Վերջին տասնամյակում ավանդական պարերի պահպանվածությունը և դրանց առկայությունը հարսանեկան արարողություններում նկատելի է Հայաստանի այն բնակավայրերում, որտեղ կենսունակ է փոխանցման դաշտը՝ ավագ սերնդի կողմից երիտասարդներին պարի հմտությունները սովորեցնելու ավանդույթը:

Բարձր գնահատելով ատենախոսի կատարած աշխատանքը, այդուհանդերձ, ունենք մի քանի նկատառումներ և առաջարկներ:

1. Շարադրանքում հանդիպում են որոշ վրիպակներ:

2. Աշխատանքի 7-րդ էջի շարադրանքում հիշատակված են պատմիչներ Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Կիրակոս Գանձակեցու, Գրիգոր Մագիստրոսի անունները, սակայն նրանց երկերի հղումները տրված չեն:

3. Աշխատանքն էապես կշահեր, եթե հեղինակն առավել հանգամանալի դասակարգեր հարսանյաց մենապարերը առանձին պատմազգագրական շրջանների պարային մշակույթի և ժամանակակից բեմադրությունների համատեքստում:

4. Ցանկալի կլիներ, որ աշխատանքում ավելի մանրամասն ներկայացվեին, քննվեին և վերլուծվեին Սյունիքի պարային մշակույթին վերաբերող նյութերը:

Վերոնշյալը բոլորովին չի նսեմացնում ատենախոսի կատարած աշխատանքը և ատենախոսության գիտաճանաչողական և կիրառական նշանակությունը:

Թանգարանը՝ որպես առաջատար կազմակերպություն, համարում է, որ ատենախոսական աշխատանքը համապատասխանում է թեկնածուական ատենախոսության պահանջներին: Սեղմագիրը և հեղինակի հրատարակումները արտահայտում են ատենախոսության մեջ արծարծված հիմնադրույթները:

Հեղինակը՝ Նարինե Ալբերտի Շամամյանը, լիովին արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկածուի աստիճանին:

Թանգարանի գիտ. գծով փոխտնօրեն
ազգագրագետ, պ.գ.թ. Ս.Հ.Պողոսյան